ՈՎՎԿ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԱԱԿ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԱԱԿ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.

Քանի որ Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) իրականացնող հաստատությունների հիմնական առաքելությունն է բավարարել տեղական աշխատաշուկայի պահաջները՝ նպաստելով ՀՀ մարզերի հավասարաչափ սոցիալ-տնտեսական զարգացմանը, ապա ՄԿՈՒ հաստատությունների կողմից՝ մարզի/տարածաշրջանի համար անհրաժեշտ կարողություններով մարդկային ներուժի ձևավորմանն օժանդակելու համար «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ) խրախուսում է վերլուծությունների իրականացումը հետևյալ ուղղություններով.

- հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների և մարզի/տարածաշրջանի տնտեսական հնարավորությունների, ոլորտային գերակայությունների և սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների համար անհրաժեշտ կարիքների փոխկապակցվածությունը,
- ՄԿՈՒ հաստատությանների շրջանավարտների զբաղվածության ապահովման համար անհրաժեշտ թվով գործատուների բացակայության պայմաններում՝ մրցակից հաստատությունների հետ համեմատական վերլուծությունը,
- իրականացվող կրթական ծրագրերի զգալի մասի համապատասխանությունն ուսումնական հաստատության ոլորտային ուղղվածությանը /շնորհվող որակավորումների պրոֆիլի հստակ տարանջատում/,
- ՄԿՈՒ հաստատությունների կողմից ռազմավարական կառավարման իրականացումը՝ տարածաշրջանի գործատուների ներգրավմամբ.
    - որքանո՞վ է հաստատության ռազմավարությունն ուղղված դեպի կոնկրետ գործատուն,
    - ո՞ր փուլում են ներգրավվում գործատուները,
    - որքանո՞վ են կայացրած որոշումները միասնական,
    - ի՞նչ ձևաչափով, պարբերականությամբ և արդյունավետությամբ է իրականացվում համագործակցությունը և այլն,
- հաստատությունների ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը աշխատաշուկայի արդի պահանջներին.
    - որքանո՞վ են հաստատություններում առկա ռեսուրսները հնարավորություն տալիս ուսանողների շրջանում ձևավորել գործատուի կողմից պահանջված գործնական կարողություններ,
    - արդյո՞ք այդ նպատակով օգտագործվում են ոլորտային գործատուների ռեսուրսային բազաները,
    - այս տեսանկյունից ինչպիսի՞ն է արտադրական պրակտիկաներ իրականացնող կազմակերպությունների հետ աշխատանքի արդյունավետությունը,
- ՄԿՈՒ հաստատությունների դինամիկ զարգացման համար անհրաժեշտ ինքնավարության կիրառումը,

- ՄԿՈՒ հաստատությունների ընկալումը շահակիցների շրջանում՝ կարիերայի պլանավորման տեսանկյունից /որպես դեպի բուհ հեշտ անցման հարթա՞կ, թե՞ աշխատաշուկա մուտք գործելուն պատրաստ լիարժեք մասնագետ թողարկող հաստատություն/:

<u>ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.</u>

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը որպես գործիք՝ ՄԿՈՒ հաստատությունների՝ արդյունավետ ռազմավարական կառավարման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման համար.

- ✓ ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ շեշտադրումները հիմնականում ուղղված են լինելու՝ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների և մարզի/տարածաշրջանի տնտեսական հնարավորությունների և կարիքների փոխկապակցվածությունը խթանող մեխանիզմների ձևավորմանը՝ ներդնելով ոլորտային գործատուների հետ համատեղ ռազմավարական կառավարման հիմքեր, որոնց իրականացման արդյունավետությունը կվերլուծվի հաստատություններում գործող որակի ներքին ապահովման համակարգերի միջոցով:

Այսպիսով, ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլի ավարտին երկրի կտրվածքով կունենանք՝ վերլուծություններ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների և մարզի/տարածաշրջանի տնտեսական հնարավորությունների և կարիքների փոխկապակցվածության վերաբերյալ, իսկ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած հաստատությունները՝ փորձագիտական զեկույցներում նշված թերությունների վերացման իրենց ծրագրերով հանձն կառնեն այդ խնդրների լուծման պատասխանատվությունը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլի արդյունքում կարող ենք ունենալ տվյալներ, երբ ուսումնական հաստատությունն իրականացնում է մասնագիտություններ.

- որոնց ուղղությամբ տարածաշրջանում չկան համապատասխան գործատուներ,
- որոնց ուղղվածությունը պետության համար գերակա չէ,
- հստակ մեխանիզմներով գնահատված չէ այդ մասնագիտությունների գծով հնարավոր պահաջարկը,
- նշյալ մասնագիտությունների շրջանավարտներն ունեն գործազրկության բարձր ցուցանիշ:

Նման տվյալների դեպքում լիազոր գերատեսչությունը կարող է վերանայել այդ մասնագիտությունների ֆինանսավորման քաղաքականությունը՝ նպաստելով պետական միջոցների առավել արդյունավետ օգտագործմանն, իսկ ուսումնական հաստատություններն ուղղորդված կլինեն օպտիմալ ռազմավարության իրականացմանը:

- **Ինստիտուցիոնալ հավատարմագրումը որպես գործիք՝ ոլորտի զարգացման քաղաքականության վերանայման համար.**

- ✓ առաջին շրջափուլի ավարտին ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ուսումնական հաստատությունները կազմած կլինեն փորձագիտական զեկույցներում նշված թերությունների վերացման ծրագրեր՝ միտված.
  1. երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ հմտություններով մարդկային կապիտալի զբաղվածության ճիշտ պլանավորմանը,
  2. ՄԿՈՒ հաստատությունների ռազմավարական կառավարման մոդելի փոփոխությանը,
  3. աշխատաշուկայի հետ համագործակցության առավել արդյունավետ ձևաչափերի ներդրմանը,
  4. աշխատանքի վրա հիմնված ուսուցման առավել արդյունավետ մոտեցումների որդեգրմանը:

Վերոնշյալ տվյալների վերլուծությունը կարող է նպաստել ՄԿՈՒ ոլորտի զարգացման քաղաքականության փոփոխությանը:

- **Ինստիտուցիոնալ հավատարմագրումը որպես գործիք՝ ՄԿՈՒ հաստատությունների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, տեսանելիության, ինքնավարության և որակավորումների ճանաչելիության մեծացման համար:**

<u>ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԱԱԿ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ.</u>

- ✓ ՄԿՈՒ հաստատություններին ուղղորդել դեպի տեղական աշխատաշուկայի կարիքների բավարարումը՝ նպաստելով գործատուների հետ համատեղ ռազմավարական կառավարման իրականացմանը,
- ✓ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների կրթական ծրագրերը համահնչեցնել մարզի/տարածաշրջանի կարիքներին և տնտեսական հնարավորություններին,
- ✓ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար խրախուսել ՄԿՈՒ հաստատությունների կողմից ոլորտային գործատուների ռեսուրսային բազաների համագործակցային օգտագործումը՝ նպաստելով հաստատություններում ռեսուրսային ապահովվածության խնդրի լուծմանը և ուսանողների շրջանում գործնական հմտությունների ձևավորմանը,
- ✓ ուղղորդել ՄԿՈՒ հաստատություններին՝ շահադրդել գործատուներին իրենց հետ համատեղ իրականացնելու սեփական կադրերի պլանավորում և պատրաստում՝ նպաստելով գործող ձեռնարկությունների կարճաժամկետ պահանջարկի, ինչպես նաև ապագա մարտահրավերների դիմակայմանը,
- ✓ նպաստել գործատու դասախոսների ներգրավվածության մեծացմանը,
- ✓ խթանել հաստատություններում վերլուծական տվյալների կուտակմանը և դրանց հիման վրա որոշումների կայացմանը: